ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

29.նոյեմբերի 2011թ. գյուղ Զովունի

2011 թվականի նոյեմբերի 29-ին տեղի է ունեցել ՀՀ Կոտայքի մարզի Զովունի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ

1. Շահեն Մուշեղյան
2. Էդուարդ Մարգարյան
3. Վարդան Սիմոնյան
4. Հրաչյա Ավետիսյան
5. Արմեն Ալեքյան
6. Հովհաննես Հայրապետյան
7. Արայիկ Մեսրոպյան
8. Կարեն Հարությունյան
9. Կարեն Խաչատրյան
10. Հայկ Արգարյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից

1. համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Բաղդասարյան
2. համայնքի ղեկավարի օգնական Սիրական Բաղդասարյան
3. աշխատակազմի քարտուղար Ռուբեն Բաբայան
4. գլխավոր մասնագետ Արշակ Պետրոսյան
5. առաջատար մասնագետ Արթուր Հովհաննիսյան
6. առաջատար մասնագետ Երջանիկ Գալստյան
7. 1-ին կարգի մասնագետ Համեստ Թումասյան
8. հարկահավաք Գուրգեն Մեսրոպյան
9. համակարգչային օպերատոր Աննա Փինաչյան
10. տրակտորիստ-մեխանիզատոր Մարատ Սիմոնյան
11. տրակտորիստ Գևորգ Հովհաննիսյան
12. գերեզմանատան պահակ Հովհաննես Հովհաննիսյան
13. գյուղապետարանի պահակ Բաբիկ Գալստյան

Միջնակարգ դպրոցի տնօրեն Վարդան Ղազարյան, Մշակութային կենտրոն ՀՈԱԿ-ի կազմակերպիչ Արարատ Արշակյան, մանկապարտեզի տնօրեն Սմբատ Թորոսյան

Համայնքի բնակիչներ Գետնոն Հարությունյան, Ժորա Հովհաննիսյան, Լորիկ Ստեփանյան, Սամսոն Հարությունյան, Հակոբ Մարգարյան և այլն

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Ժամանակին կայացել են համայնքի ավագանու նիստերը: Որոնք համապատասխանել են ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի պահանջներին: Ավագանու կայացրած որոշումներում եղել են մասնակի բացթողումներ, որոնք ժամանակին լրացվել և ուղղվել են մարզպետարանի բաժինների համապատասխան զգուշացումներից հետո:

2011թ. ընթացքում համայնքի բյուջեի հաշվին և համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները...

1. 2011 թվականին կապված Ամանորի և Սուրբ ծննդյան տոնակատարության հետ միջոցառում է կազմակերպվել մշակութի տան դահլիճում, որը նկարահանվել և հեռարձակվել է Երևան հեռուստաընկերության կողմից և ցուցադրվել որպես օրինակելի համայնքի ղեկավարի նախաձեռնություն:
2. Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյանի աջակցությամբ պետական բյուջեով նախատեսված 50.0մլն դրամ գումարի շրջանակներում մանկապարտեզի առաջին երկհարկանի մասնաշենքը ամբողջությամբ ենթարկվել է կապիտալ վերանորոգման իսկ համայնքի բյուջեի հաշվին մասնաշենքի համար ձեռք են բերվել ժամանակակից վարագույրներ, կատարում է գազաֆիկացման, ջեռուցման աշխատանքներ, ցանկապատի նորոգում և տարածքի բարեկարգման աշխատանքներ:
Երկրորդ և երրորդ մասնաշենքերի համար պատվիրվել է կապիտալ վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր համայնքի բյուջեի հաշվին, որը ըստ գործող կարգի համաձայն գնումների մասին օրենքի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դրվել է մրցույթի:
3. 2011թ. ընթացքում համայնքի բյուջեի հաշվին 1941-1945թթ. հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և զոհված ազատամարտիկների հուշահամալիրում կատարվել է վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ:
Մայիսի 9-ի հաղթանակի օրվան նվիրված տոնական միջոցառումների շարքից համայնքի ղեկավարի և ավագանու նախաձեռնությամբ կազմակերպվել է տոնական միջոցառումներ, որի ընթացքում մասնակիցներին տրվել է ճաշկերույթ իսկ զոհված ազատամարտիկների և վիրավոր հաշմանդամների ընտանիքներին տրվել է ֆինանսական օգնություն:

4. Համայնքի ղեկավարի, համայնքի մի խումբ բնակիչների և մշակութային կենտրոնի մասնակցությամբ մարզպետի աջակցությամբ հանապետական նշանակության միջոցառումներ են կազմակերպվել 'Արի տուն' ծրագրով, որի համար ՀՀ սփյուռքի նախարարի կողմից համայնքի ղեկավարը արժանացել է շնորհակալագրի:
Ինչպես նաև համայնքի ղեկավարը և մշակութային կենտրոնը Գյումրի քաղաքում մշակութային միջոցառումների շրջանակներում արժանացել են պարգևատրման ՀՀ մշակույթի նախարարության կողմից:
2011թ. ընթացքում համայնքը բազմաթիվ հաջողություններ է ունեցել նաև սպորտի և մշակույթի բնագավառներում որոնց մասին տեղեկությունները զետեղված են 'Զովունիի մշակութային կենտրոն' գրքույկում, որի մեկ օրինակը կցվում է հաշվետվությանը:
5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի առաջարկությամբ համայնքը մասնակցել է 'Բազե 2011' համահայկական միջոցառմանը, որի ընթացքում արժանացել է մարզպետի շնորհակալությանը:
6. 2011թ. համայնքի բյուջեի հաշվին կատարվել է բուժ. ամբուլատորիայի մասնաշենքի 2-րդ հարկի հատակի սալիկապատում:
7. Հունվարի մեկի, մարտի ութի, սեպտեմբերի մեկի, ուսուցչի օրվան նվիրված և նոյեմբերի հինգի Տեղական ինքնակառավարման մարմինների տասնհինգ ամյակին նվիրված տոնական միջոցառումների ընթացքում խրախուսանքներ են տրվել համայնքի ղեկավարին, համայնքի ենթակայության հիմնարկներին, դպրոցական և ուսուցիչական կոլեկտիվին:
Դպրոցի ուսուցչի օրվա կապակցությամբ, Հ. Թումանյանի 100 ամյակին նվիրված միջոցառումը լավագույնս կազմակերպելու համար ուսուցիչներ Էմմա Հովհաննիսյանին, Հասմիկ Հարությունյանին, Արմենուհի Բաղդասարյանին տրամադրվել են դրամական խրախուսանքներ:
8. Համայնքի ֆոնդային բյուջեի միջոցներով համայնքում կատարվել է 10մլն դրամի ասֆալտապատ ճանապարհների փոսային վերանորոգման աշխատանքներ:
9. Կատարվել է գյուղապետարանի մասնաշենքի 1-ին հարկի դահլիճի վերանորոգման աշխատանքներ, տեղադրվել է ջեռուցման համակարգ, ձեռք է բերվել համապատասխան գույք , պատվիրվել է ժամանակակից վարագույրներ:
Շաբաթ օրերը համայնք ղեկավարի կողմիվ կատարվում է համայնքի բնակչության ընդունելություն և համայնքի ղեկավարի աջակցությամբ համայնքի բնակչությանը հուզող հարցերին տրվում են համապատասխան լուծումներ:
Համայնքի ղեկավարությունը 2011 թ. ընթացքում արժանացել է մի շարք շնորհակալագրերի և պարգևատրումների, որոնց պատճենները կցվում են հաշվետվությանը:

Համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրումը առայժմ կատարվում է մեծ դժվարություններով հատկապես հողի հարկի և գույքահարկի գծով, որը մինչև տարեվերջ կկատարվի 100 տոկոսով:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

1. Ելույթ ունեցավ մշակութային կենտրոնի կազմակերպիչ Արարատ Արշակյանը, նշելով որ

(հեքիաթասացության մրցույթ 2-րդ տեղ, բոնցքամարտի հուշամրցաշարեր և այլն), և մինչև տարեվերջ կբեմադրվի մեկ մեծ ներկայացում իսկ Ամանորին 2011-2012 թ. մանկական ուրախ հանդես-միջոցառում

2. Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Վ. Ղազարյանը, նշելով որ որպպես դպրոցի տնօրեն կաջակցի համայնքի ղեկավարին բյուջեի հավաքագրման հարցում ըստ իր աշխատակիցների

3. Ելույթ ունեցավ մանկապարտեզի տնօրեն Սմբատ Թորոսյանը, նշելով որ արդեն ավարտվել է մանկապարտեզի մեկ մասնաշենքի վերանորոգման աշխատանքները, իսկ այժմ ընթացքի մեջ է 2-րդ մասնաշենքի վերնարոգման աշխատանքները

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

լրացուցիչ ծանուցումներով տեղյակ պահել գույքահարկի և հողի հարկի խոշոր պարտք ունեցող քաղաքացիներին, դիմել մարզային իշխանությանը այս հարցում աջակցելու խնդրանքով, համայնքի տարածքում աղբ թափող քաղաքացիներին և իրավաբանական անձանց ենթարկել համապատասխան տույժերի և այլն

ՈՐՈՇՎԵՑ

1. *միջնակարգ դպրոցի կոլեկտիվին լրացուցիչ տեղյակ պահել իրեն չվճարած հարկերի մասին և նրանցից գանձել գումարներ*
2. *գլխավոր մասնագետ Ա. Պետրոսյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Բաղդասարյանը և քարտուղար Ռ. Բաբայանը խոշոր պարտք ունեցող քաղաքացիներին որոշեցին նույնպես լրացուցիչ տեղյակ պահել իրենց չկատարած վճարումների մասին և անձամբ այցելել նրանց բնակարաններ*
3. *աշխատակազմի առաջատար մասնագետ Ե. Գալստյանը առաջարկեց նոր հասցեավորման ժամանակ առաջադրել հասցեի տեղական վճար*
4. *չվճարող քաղաքացիների պարտքի գանձման համար դիմել համապատասխան ատյանի դատարան պարտքի բռնագանձման համար*
5. *աջակցել մշակութային կենտրոնին իր աշխատանքների համար*
6. *մշտապես հսկողության տալ պահել մանկապարտեզի շենքի վերանորոգումների աշխատանքների ընթացքը*
7. *համայնքի բնակիչ, մասնագիտությամբ գյուղատնտես Ժ. Հովհաննիսյանը ներկա բնակիչներին տվեց ցուցումներ ուշ աշնանային գյուղատնտեսական աշխատանքների մասին*
8. *համայնքի բնակիչ Ա. Ավետիսյանը հայտարարեց գյուղում Հայոց Արծիվներ կազմակերպության նորաբաց մասնաճյուղի պլանավորվելիք աշխատանքների մասին*

և այլն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

«Յուրաքանչյուր մշակութային օջախ կոչված է կրելու իր ազգի մշակութային ժառանգությունը, բազմապատկելու և տարածելու այն»

Մեղվի նման աշխատասեր, բարիքներով,
Սեղանն առատ, մառաններում անուշ գինի,
Գիր է սիրում մեր գյուղացին, խոսքը համով,
Մեր տունն է սա, երգ ու պարով մեր Զովունին:

Կոտայքի մարզի Զովունի համայնքը, որն ունի 8.000 բնակչություն, ոչ միայն մարզի, այլև Հայաստանի Հանրապետության ամենակազմակերպված համայնքներից է: Դա կարող են վկայել համայնքի ինչպես հայ բնակիչները, այնպես էլ՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Գյուղն ունի տիպային դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, ասֆալտապատված են ներհամայնքային ճանապարհները, գյուղը գազիֆիկացված է:

Այս ամենի կազմակերպիչը, բնականաբար, համայնքի ղեկավարն է՝ Սերժիկ Ավետիսյանը, ով իր աշխատանքի շնորհիվ՝ համայնքապետի ընտրություններում արդեն հինգ անգամ շահել է համագյուղացիների ձայների մեծամասնությունը: Մեզ հետ ունեցած զրույցում՝ երկար տարիների աշխատանքային փորձառություն ունեցող համայնքապետը ներկայացրեց Զովունի համայնքի ձեռքբերումները, խոսեց նաև գյուղի հոգսերի ու ազգամիջյան հարաբերությունների մասին:

- Ո՞րն եք համարում Ձեր ղեկավարած համայնքի այցեքարտը:

- Զովունու հարստություններից մեկը նրա մշակույթի օջախն է՝ Մշակութային կենտրոնը, որը մշտապես նոր շունչ է տվել համայնքին: Յուրաքանչյուր մշակութային օջախ կոչված է կրելու իր ազգի մշակութային ժառանգությունը, բազմապատկելու և տարածելու այն: Զովունու մշակութային կենտրոնը ևս փորձում է իր համեստ լուման ներդնել, որպեսզի հագեցած լինի գյուղի բնակչության մշակութային կյանքը: Պետք է նշեմ, որ մեր Մշակութային կենտրոնը ղեկավարում է Նարեկ Արշակյանը, ում մասնագիտական հմտությունների մասին են խոսում մշակույթի տան սաների ձեռքբերումներն ու հաջողությունները: Մշակույթի կենտրոնը մշտապես մեր ուշադրության կենտրոնում է և ամբողջ տարվա ընթացքում այնտեղ աշխատող արհեստավարժ աշխատակիցների ջանքերով կյանքի են կոչվում մշակութային, գեղագիտական, խմբակային աշխատանքներ, ազատ ժամանցի բազմաժանր ծրագրեր:

- Խնդրում եմ նշել, թե ի՞նչ խմբակներ են գործում կենտրոնում:

- Մեր մշակույթի տանը գործում են բազմաթիվ խմբակներ, սակայն մեր հիմնական հպարտությունը մանկական երգի պարի համույթն է, որն արդեն քառորդ դար փայլում է բազմաթիվ բեմերում: Հրաշք մանուկներ ունեցող այդ կոլեկտիվը մշտապես մասնակցում է մարզային, հանրապետական միջազգային փառատոների:

- Բացի դպրոցականների արտադպրոցական կրթությանը միտված աշխատանքներից, ուրիշ ի՞նչ խնդիրներ է լուծում Մշակութային կենտրոնը:

- Կենտրոնն իր գործունեության կարևոր մասն է համարում երիտասարդության հանգստի կազմակերպումը ոչ միայն խմբակային ու դպրոցականների գեղագիտական դաստիարակությանն ուղղված աշխատանքներում, աշխատանքներ են տարվում նաև համայնքի երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպման ուղղությամբ. գյուղի երիտասարդությունն այստեղ հնարավորություն ունի բիլիարդ, թենիս, շախմատ խաղալ, շփվել միմյանց հետ:

- Գիտեմ, որ Կենտրոնը համագործակցում է նաև գյուղի դպրոցի հետ, ի՞նչ աշխատանքներ են իրականացվում այդ ուղղությամբ:

- Համատեղ իրականացնում են գեղեցիկ ծրագրեր, այդ թվում նշվում են հոբելյաններ, «Վերջին զանգի» միջոցառումներ, աշակերտական բացօթյա հանդիսություններ: Կենտրոնը հյուրընկալում է մեր ազգի արժանավոր զավակների. այդ թվում՝ մշակութային, քաղաքական, մարզական, կրթության ոլորտի բարձրաստիճան գործիչների՝ նրանց մեծարման ցերեկույթներ է կազմակերպում:

Բացի այս, պետք է նշեմ նաև, որ մեր համայնքն աշխուժորեն է մասնակցում ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ իրականացվող «Արի տուն» ծրագրին. սփյուռքահայ երեխաները բազմիցս հյուրընկալվել են մեր գյուղում: Զովունին նաև «Բազե» համահայկական խաղերի աշխույժ մասնակից է:



* * *

Զովունու գյուղապետ Սերժիկ Ավետիսյանի գործելաոճում առաջնահերթությունը միշտ տրվում է զարգացմանը: Գյուղը պիտի ապրի ու զարգանա. գյուղացին պետք է ամեն վայրկյան զգա դրական փոփոխությունների շունչը: Այս պահին էլ շինարարական աշխատանքներ են ընթանում. շնորհիվ մարզպետի միջնորդության՝ գյուղական այս համայնքին ՀՀ կառավարության հատկացրած գումարով հիմնովին վերանորոգվում է գյուղի մանկապարտեզը: «Այն լավագույնն է լինելու մեր մարզում»,- ասում է Ս. Ավետիսյանը:

Համայնքապետի ուշադրության կենտրոնում են հատկապես զոհվածների, հաշմանդամ ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքները, ում օգնության ձեռք է մեկնվում ամեն անհրաժեշտ պահի:

Համայնքի բնակիչները գնահատում են իրենց համայնքապետի՝ գյուղի զարգացմանն ուղղված բոլոր ջանքերն ու նախաձեռնությունները ու միշտ նեցուկ են լինում նրա բոլոր որոշումներին ու առաջարկներին, քանի որ նա աշխատանքով է փաստել, որ եթե սխալներ էլ լինում են, դրանք այնքան չնչին են, որ մեծապես չեն կարող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐ

MINISTER
OF DIASPORA
OF THE REPUBLIC
OF ARMENIA

Գնահատագիր
Certificate of gratitude

ՏՐՎՈՒՄ Է

ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

«Սփյուռքի երիտասարդության Հայաստան պարբերական այցելությունների «Արի տուն» ծրագրին գործուն աջակցություն ցուցաբերելու համար:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ
HRANOUSH HAKOBYAN

№ 151-11
«11» 10 2011 թ.
Երևան Yerevan

ԾԱՌԱՅԱԳԻՐ

Տրվում է Զոկումի գյուղապետարանի
աշխատակազմին

Ղարաբաղյան զորամասի վետերաններին և
զոհված զորամասայիններին մշտապես
աջակցելու համար

Ղարաբաղյան Պատերազմի
Վետերանների Միության
նախագահ՝ Յու.Միքայելյան

«09» 05 2019թ

design in VIP LLC

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Տրվում է

Զովունիի գյուղապետարանին

Զովունիի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված
բռնցքամարտի հուշամրցաշարին ակտիվ աջակցություն
ցուցաբերելու համար:

Բռնցքամարտի օլիմպիական
մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն՝ Ա.Չարգարյան

Ք.Երևան
2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՊԱՏՎՈԳԻՐ

Հայաստանի Հանրապետությունում
Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման
15-ամյա հոբելյանի կապակցությամբ

Տրվում է

Զովունի համայնքի ղեկավար
ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Տեղական ինքնակառավարման համակարգում արդյունավետ գործունեություն ծավալելու. աշխատանքի ընթացքում ունեցած ակնառու հաջողությունների. ինչպես նաև համայնքի զարգացման ասպարեզում ներդրած նշանակալի ավանդի համար:

ՄԱՐԶՊԵՏ **Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

10.նոյեմբերի.2011թ.